**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## 24.10.2025Թ. ՆԻՍՏԻ

**ՀՀ, ք.Երևան**

2025 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Մեդիա հրապարակումների հիման վրա պաշտոնատար անձանց՝ շահերի բախման վերաբերյալ իրականացված ուսումնասիրության ներկայացում,
2. Անհամատեղելիության պահանջների խախտման հետ կապված հարցի քննարկում,
3. Պետական ֆինանսավորում չստացող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների թվայնացման ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների հիման վրա ստուգման գործընթաց նախաձեռնելու հարցի քննարկում,
4. Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 04-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունման հարցերի քննարկում,
5. Նախընտրական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կայքում հրապարակելու վերաբերյալ քննարկում:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից առաջարկվեց քննարկել Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված դիմումը՝ կապված ոստիկանության ծառայողի կողմից առևտրային կազմակերպության կողմից որպես ներկայացուցիչ հանդես գալու հետ և պարզաբանում հայցելով Հանձնաժողովից ծառայողի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու վերաբերյալ: Քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց, հաշվի առնելով մի կողմից ՀՀ ՆԳՆ-ում վարքագծի կանոնագրքի բացակայության և մյուս կողմից՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման նորմի նպատակային նշանակության մեկնաբանման հանգամանքը, կատարված արարքը չհամարել խախտում:

Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից առաջարկվեց քննարկել նաև ՀՀ փոխվարչապետի կողմից Հանձնաժողովին վերահասցեագրված դիմումը, ներկայացված Եվրասիական տնտեսական դատարանի նախագահի կողմից՝ մասնագիտական խմբերում փորձագետների ներգրավման վերաբերյալ: Վերահասցեագրման նպատակն էր ներկայացնել դիրքորոշում անհամատեղելիության պահանջների խախտման ենթատեքստում փորձագետների վարձատրության վերաբերյալ: Քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց գրության մեջ նշել, որ Եվրասիական տնտեսական դատարան ՀՀ կողմից ներկայացվող մասնագիտացված խմբերի փորձագետների ցուցակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողներին ընդգրկելու դեպքում, անհամատեղելիության պահանջների խախտումներից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է տրամադրել տեղեկություն վերջիններիս վարձատրության անթույլատրելիության մասին՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջներին համապատասխան:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Գևորգ Ղարիբյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացվեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիրությունը և գրավոր դիմել Երևանի քաղաքապետարան՝ հետամուտ լինել Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Գևորգ Ղարիբյանի կողմից շահերի բախման իրավիճակների կանխարգելման հարցում:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում Մարտունու համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացվեցին Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված՝ ավարտել գործը:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում Չարենցավանի համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացվեցին Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացվեց Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից, որի մանրամասները ներկայացվել էին գրավոր ընթացակարգով, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարչության կողմից առաջարկված ձևաչափով հրապարակել կուսակցությունների նախընտրական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները:

Հանձնաժողովի նիստը շարունակվեց սույն թվականի հոկտեմբերի 27-ին: Մինչև Հանձնաժողովի նիստը սկսվելը Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից առաջարկվեց օրակարգում ներառել նաև «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին» որոշման նախագիծն ընդունելու հարցը:

Օրակարգի երրորդ հարցի մանրամասները ներկայացվեցին Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց իրականացնել «Միավորված աշխատանքային», «Շանթ Դաշինք» և «Ազգային Օրակարգ» կուսակցությունների 2022-2024 թվականների հաշվետվությունների ստուգում:

Օրակարգի չորրորդ հարցի մանրամասները ներկայացվեցին Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վերանայել տեխնիկական վրիպակները և ուղարկել հրապարակման:

Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից ներկայացվեց նաև «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին» որոշման նախագիծը, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց ներկայացված դիտարկումների հիման վրա խմբագրել Նախագիծը և ներկայացնել Հանձնաժողովի անդամների հաստատմանը:

## ՈՐՈՇԵՑ

1. Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված դիմումին ի պատասխան՝ հաշվի առնելով մի կողմից ՀՀ ՆԳՆ-ում վարքագծի կանոնագրքի բացակայության և մյուս կողմից՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման նորմի նպատակային նշանակության մեկնաբանման հանգամանքը, կատարված արարքը չհամարել խախտում:

2. ՀՀ փոխվարչապետի կողմից Հանձնաժողովին վերահասցեագրված դիմումին ի պատասխան՝ գրության մեջ նշել, որ Եվրասիական տնտեսական դատարան ՀՀ կողմից ներկայացվող մասնագիտացված խմբերի փորձագետների ցուցակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողներին ընդգրկելու դեպքում, անհամատեղելիության պահանջների խախտումներից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է տրամադրել տեղեկություն վերջիններիս վարձատրության անթույլատրելիության մասին՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջներին համապատասխան:

3. Ավարտել Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ Գևորգ Ղարիբյանի նկատմամբ ուսումնասիրությունը և գրավոր դիմել Երևանի քաղաքապետարան՝ հետամուտ լինել Գևորգ Ղարիբյանի կողմից շահերի բախման իրավիճակների կանխարգելման հարցում:

4. Մարտունու համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված ավարտել գործը:

5. Չարենցավանի համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի վերաբերյալ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի վերաբերյալ իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման նախագիծ:

6. Հայտարարագրերի վերլուծության արչության կողմից առաջարկված ձևաչափով հրապարակել կուսակցությունների նախընտրական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները:

7. Իրականացնել «Միավորված աշխատանքային», «Շանթ Դաշինք» և «Ազգային Օրակարգ» կուսակցությունների 2022-2024 թվականների հաշվետվությունների ստուգում:

8. «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 04-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին որոշման» նախագծի տեխնիկական վրիպակներն ուղղել և ուղարկել հրապարակման:

9. «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին» որոշման նախագիծը Հանձնաժողովի անդամների դիտարկումների հիման վրա խմբագրել և ներկայացնել Հանձնաժողովի անդամների հաստատմանը:

Օրակարգում ներկայացված վերջին հարցի քննարկումը Հանձնաժողովը որոշեց տեղափոխել հաջորդող նիստ:

**ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝** **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝** **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝** **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**